10 ԱՊՐԻԼԻ

Արծիւեանի

Թմրած աշխարհը կեանք առաւ նորից...
Ահա ամեն տեղ
Քո սէրն է երգւում, գարո՛ւն ոգելից,
Գարո՛ւն շնորհագեղ։

Անտառի խորքում քո սէրն է երգում
Սիրավառ սոխակ.
Մաղկալից դաշտում քեզ է հեզ ժպտում
Սիրուն մանուշակ։

Մատղաշ գառնուկներ լեռան լանջերում
Քաղցր մալիւնով՝
Հովուի սրնգի հետ քեզ են ողջունում
Ներդաշնակ ձայնով։

Քո գալն են օրհնում արև ու աստղեր,
Եւ երկինք անամպ.
Քո սէրն են երգում թէ՛ ջահիլ, թէ՛ ծեր
Բուռն ցնծութեամբ։

Թմրած աշխարհին կեանք տուիր նորից.
Ահա՛ ամեն տեղ
Քո սէրն է երգւում, գարո՛ւն ոգելից,
Գարուն շնորհագեղ։

Մոսկ. 1890 թ.